# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 3

## «ԵՔԼ ՇՀԱՊՁԲ 17/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

02 Դեկտեմբեր 2016թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ — Վ. Հարությունյան
Հանձնաժողովի անդամներ՝ — Ն. Նելքումովա, Ա. Անանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ — Ա. Մինասյան:

Օրենքով սահմանված կարգով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հրապարակման մասին

---

(Ա. Անանյան)

2-րդ չափաբաժնի մասով գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով բանակցություններ անցկացնելու մասին

**1.** Բանակցություններին ներկայացել են «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ-ի և «ՄԱՔՍՀՈՒՐ» ՍՊԸ ներկայացուցիչները:

Մասնակիցներին պարզաբանվել է բանակցությունների անցկացման կարգը, ըստ որի, բանակցությունները պետք է անցկացվեն 15 րոպե տևողությամբ և չափաբաժնի մասով մասնակցին հնարավորություն է տրվելու համապատասխանաբար երեք անգամ գնային առաջարկ ներկայացնել:

1.1 Բանակցությունների ընթացքում ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը

1.1.1 2-րդ չափաբաժնի մասով (Ավտոմոբիլային դիզելային վառելիք) առաջարկված գինը

| «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ | | «ՄԱՔՍՀՈՒՐ» ՍՊԸ | |
|---|---|---|---|
| Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ |
| 18282000 | - | 18810000 | - |

2. Մասնակիցների կողմից առաջարկված գներն ըստ չափաբաժինների հետևյալն է.

| Գնման առարկայի անվանում | «ՖԼԵՇ» ՍՊԸ | | «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ | | «ՄԱՔՍՀՈՒՐ» ՍՊԸ | |
|---|---|---|---|---|---|---|
| | Առանց ԱԱՀ Եվրասիական տնտեսական միության արտադրանք | Եվրասիական տնտեսական միության արտադրանք Ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ Եվրասիական տնտեսական միության արտադրանք | Եվրասիական տնտեսական միության արտադրանք Ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ Եվրասիական տնտեսական միության արտադրանք | Եվրասիական տնտեսական միության արտադրանք Ներառյալ ԱԱՀ |
| Բենզին ռեգուլյար | 24000000 | 28800000 | 25200000 | 30240000 | 24880000 | 29856000 |
| Ավտոմոբիլային դիզելային վառելիք | 19140000 | – | 18282000 | – | 18810000 | – |

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերի համաձայն և հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման առաջարկությունը, ներկայացված գնային առաջարկների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

3.1 - ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել՝ «ՖԼԵՇ» ՍՊԸ -ին,

- ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել՝ «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ-ին,

3.2. - ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 2-րդ տեղ զբաղեցնող ճանաչել՝ «ՄԱՔՍՀՈՒՐ» ՍՊԸ-ին,

- ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղ զբաղեցնող ճանաչել՝ «ՄԱՔՍՀՈՒՐ» ՍՊԸ-ին,

3.3. -ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 3-րդ տեղ զբաղեցնող ճանաչել՝ «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ-ին

-ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով 3-րդ տեղ զբաղեցնող ճանաչել՝ «ՖԼԵՇ» ՍՊԸ -ին,

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

4. Հանձնաժողովն առաջարկեց առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ ծանուցումը ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, իրավերով սահմանված կարգով՝ գրությամբ, Պատվիրատուին ներկայացնել որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Ընթացակարգի իրավերի պահանջներին համապատասխանությունը գնահատելու նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից, սահմանված ժամկետում վերը նշված գրությունը ներկայացնելու և ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից տրամադրվող տեղեկությունն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, բայց ոչ ուշ, քան ծանուցումն ուղարկելու չորրորդ աշխատանքային օրվա ժամը 10:00-ն, ք. Երևան, Բուզանդի 1/4 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի՝
Նախագահ ________ Վ. Հարությունյան

Անդամներ՝ ________ Ն. Մելքումովա

________ Ա. Անանյան

Քարտուղար՝ ________ Ա. Մինասյան